



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020 թվականի թիվ 66-Ս

ք. Երևան

«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2020 թվականի հունիսի 11-ին հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) մշտադիտարկման արդյունքում՝ տեղում դիտարկում իրականացնելիս արձանագրվել է խախտում՝ Ընկերության կողմից իրականացվել է ոչ սեփական հեռուստածրագրի վերահեռարձակում՝ առանց Հանձնաժողովի թույլտվության, խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի հունիսի 11-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը և ղեկավարվելով օրենքի 45.1-րդ հոդվածով, համաձայն որի հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 15-Ս հրամանի համաձայն իրականացրել է Ընկերությունում մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Ընկերությունում՝ տեղում դիտարկման արդյունքներով Հանձնաժողովի ներկայացուցիչը 2020 թվականի հունիսի 11-ին կազմել է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի՝ Ընկերության կողմից առանց Հանձնաժողովի թույլտվության վերահեռարձակվում է «Շանթ» հեռուստածրագիրը:

Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունը ստորագրել են Հանձնաժողովի և Ընկերության ներկայացուցիչները:

Հանձնաժողովը 2020 թվականի հունիսի 11-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և իրավական հիմքերը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր դիրքորոշումը, համաձայն որի՝ Ընկերությունը 2020 թվականի հունիսի 3-ին դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ Ընկերության և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության միջև 2018 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագրի հիման վրա ոչ սեփական հեռուստաձրագիր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու համար: Սակայն, Ընկերության դիմումին ի պատասխան 2020 թվականի հունիսի 08-ին ստացել է Հանձնաժողովի գրությունը (05.06.2020թ. թիվ 05-354 գրություն), որով մերժվել է թույլտվության տրամադրումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2020 թվականի հունիսի 3-ին «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությունը թիվ 28-ՀՍ/20 գրությամբ տեղեկացրել է Հանձնաժողովին, որ Պայմանագիրը վերջին անգամ երկարաձգվել է 2019 թվականի դեկտեմբերի 1-ին, որի ժամկետը լրացել է 2020 թվականի հունիսի 1-ին և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի մարտի 16-ին թիվ 12-ՀՍ/20 գրությամբ հայտնել է Ընկերությանը Պայմանագիրը չերկարաձգելու մտադրության մասին:

Ընկերությունը իր դիրքորոշման մեջ հայտնել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում վարչական գործ ըստ իրեն հայցի ընդդեմ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, այն է «ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ-ի և «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրի հիման վրա «Շանթ» հեռուստաձրագրի վերահեռարձակման վերաբերյալ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից թույլտվություն տրամադրելու վերաբերյալ, իսկ ՀՀ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործը, որը վարույթ է ընդունվել նույնպես Ընկերության հայցադիմումի հիման վրա՝ ընդդեմ «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի՝ «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի և «ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիրը նույն պայմաններով մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը ժամկետով վերսկսված ճանաչելու պահանջով:

Ըստ Ընկերության, քանի որ վարչական վարույթը հարուցվել է Ընկերության կողմից առանց թույլտվության «Շանթ» հեռուստաձրագրի վերահեռարձակում իրականացնելու փաստական հիմքով, իսկ Ընկերության կողմից «Շանթ» հեռուստաձրագրի վերահեռարձակման թույլտվություն չունենալու հիմքը Հանձնաժողովի կողմից թույլտվության տրամադրման մերժումն է, որի օրինականությունն Ընկերության կողմից վիճարկվում է ՀՀ վարչական դատարանում, իսկ ՀՀ Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանում վիճարկվում է «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի հետ 2018 թվականի

դեկտեմբերի 1-ին կնքված հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացած լինելու փաստի օրինականությունը, հետևաբար՝ Ընկերությունը հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, միջնորդություն է ներկայացնում Հանձնաժողով կասեցնելու հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական և քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտերի կայացումը:

Դիրքորոշման մեջ Ընկերությունը ևս մեկ անգամ տեղեկացնում է, որ շարունակում է վերահեռարձակել «Շանթ» հեռուստածրագիրը:

Ընկերության նկատմամբ 2020 թվականի հունիսի 11-ին հարուցված վարչական վարույթը կասեցնելու միջնորդությանն ի պատասխան Հանձնաժողովը թիվ 05-388 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ Հանձնաժողովը չի կարող կասեցնել հարուցված վարչական վարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով, քանի որ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումները՝ ՎԴ/3457/05/20 վարչական գործով վարույթ է ընդունվել պարտավորեցման հայցով, իսկ ԵԴ/16714/02/20 քաղաքացիական գործով վարույթ է ընդունվել 2018 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիրը նույն պայմաններով մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը ժամկետով վերսկսված ճանաչելու պահանջի մասին հայցով, իսկ Հանձնաժողովի կողմից 2020 թվականի հունիսի 11-ին Ընկերության նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել՝ իրավախախտման արձանագրման փաստով, հետևաբար հիմքերը տարբեր են և 2020 թվականի հունիսի 11-ին հարուցված վարչական վարույթի կասեցման հիմք չի կարող հանդիսանալ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի իրականացրած տեղում դիտարկման արդյունքներին, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Ընկերության կողմից իրականացվում է ոչ սեփական հեռուստածրագրի վերահեռարձակում՝ առանց Հանձնաժողովի թույլտվության, դրանով իսկ խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռքբերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է Ընկերության կողմից իրականացված իրավախախտում, այն է՝ առանց Հանձնաժողովի թույլտվության ոչ սեփական հեռուստածրագրի վերահեռարձակման իրականացում:

Նշված արարքը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի և 60-րդ հոդվածի 6-րդ մասի հասկանալի շեղմանը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոծրագրերը հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց Հանձնաժողովին տեղեկացնելու վերահեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆԶՆԱԺՋՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

Վ. ՕՉԱՆՅԱՆ

17 հուլիսի 2020թ.

ք. Երևան